

ՔԱՐՍԵՂ ԿԵՆՈՒՄԱՑՈՒ ՎԵՑԱԻՐԵԱՅԻՆ ԵՎ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ
ՈՐՈՇ ԵՐԿԵՐԻ ՏԵՔՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱՌՆՁԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Կ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հայ դասական և հետագա շրջանի մատենագրության լիարժեք գնահատման գործում կարևոր նշանակություն ունի սկզբնաղբյուր գրող ճշտումն ու աղբյուրագիտական արժեքի բացահայտումը, որով, թերևս, հնարավորություն է ընձեռվում ըստ ամենայնի գնահատելու մատենագրական փոխառնությունների հարատև երևույթը: Այս իմաստով հատուկ քննության նյութ կարող են հանդիսանալ բյուզանդական նշանավոր մատենագիր Բարսեղ Կեսարացու «Վեցարեայ» երկասիրության թողած հետքերը մեր շատ մատենագիրների, այդ թվում և Անանիա Շիրակացու գործերի վրա: «Վեցարեայի» հրատարակության առաջաբանում ասված է՝ «Շիրակունին և այլք ի հնոցն բազում ինչ ի ճառից աստի գրեթէ նովին իսկ բառիւքն օրինակեն»¹:

Նշված հաղորդման շուրջ մեզ ծանոթ մյուս վկայությունը պատկանում է բանասեր Հ. Թորոսյանին: Նա «Վեցարեայ» ճառերի հայերեն թարգմանությունը գնահատելիս նկատում է. «Արդեն յայտնի է, թե Անանիա Շիրակացի իր «Ցաղագս երկնից» գրքին մեջ ամբողջ էջերով բառ առ բառ օրինակեր է «Վեցօրեայ» ճառերուն հայ թարգմանութենէն (Գ, Դ և բոլոր Զ ճառը),—ինչպես նաև մեր բոլոր այն մատենագիրները՝ որոնք «Մենդոց» գրքին մեկնութիւնը գրած են, իրենց միակ և գլխաւոր աղբիւր ունեցեր են Ս. Բարսղի Վեցօրէից հայ թարգմանութիւնը»²:

Հայ իրականության մեջ «Վեցարեայ» ճառերի և Շիրակացու առնչակցության խնդիրն այնուհետև ակնարկել են բանասերներ Գ. Տեր-Մկրտչյանը, Մ. Արեղյանը, Ա. Աբրահամյանը, Վ. Զալոյանը և Ս. Արևշատյանը³: Նշված հայագետների դիտողությունները բարձր գնահատելով հանդերձ՝ պետք է նկատել, որ Կեսարացու և Շիրակացու տեքստաբանական առնչակցության խնդիրը առանձին վերցրած չի զբաղեցրել նրանցից ոչ մեկին, ուստի և խնդիրը տակավին կարոտ է քննության:

VII դարի նշանավոր մատենագիր Անանիա Շիրակացին իր «Հայտնության ճառում» գրում է. «...բայց ես հաւանիմ որով յոյնք պարծին, երանելիացն ասեմ Բարսղի եւ Գրիգորի Անձիանձու գիտեմ զնոսա սուրբս, ճշմարիտս, հոգեւորս եւ հետեւողս առաքելոցն»⁴:

¹ Սրբոյ Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապաղովկացւոց՝ ճառք վասն Վեցօրեայ արարչութեանն, Վենետիկ, 1830, Առաջարան (այսուհետև՝ Կեսարացի):

² Զ. Թորոսեան, Ս. Բարսեղ Կեսարացի, իր Վեցօրեայ ճառերը և հայ թարգմանութիւնը (տե՛ս «Բաղմավէպ», 1934, № 11—12, էջ 422):

³ Գ. Տեր-Մկրտչյան, Անանիա Շիրակացի, էջ 34, Մ. Արեղյան, Երկեր, հ. Գ, Եր., 1968, էջ 423—425, Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Ե., 1944, էջ 169, В. Чалоян, История армянской философии, Ер., 1959, էջ 133, Ս. Արևշատյան, Հայոց գրերի ստեղծման պատմական պատճառները և հին հայկական թարգմանությունները (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 7, Ե., 1964, էջ 68):

⁴ Տե՛ս Ա. Աբրահամյան, Նշվ. աշխ., էջ 286—287.

Նշված վկայությունը հիմք է տալիս ենթադրելու, որ Շիրակացին ծանոթ է եղել երկու նշանավոր կապադովկացիների՝ Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նազիանզացու կյանքի ու գործունեության ինչ-ինչ կողմերի, նրանց մատենադրական ժառանգությանը, ինչպես կտեսնենք. հատկապես Կեսարացու «Վեցարեայ» երկասիրության հայերեն թարգմանությունը: Համեմատությունից պարզվում է, որ Շիրակացին Բարսեղ Կեսարացու «Վեցարեայից» օգտվում է հատվածաբար, սակայն ունի երկու տարբեր մոտեցում. մեկ այն, որ հիշատակում է օգտագործվող գործի խորագիրն ու հեղինակը և երկրորդ՝ բանաբանում է առանց նմանօրինակ վկայակոչման:

Առաջին դեպքում Կեսարացին վկայակոչվում է՝ «Եւ երանելին Բասիլիոս ի Վեցօրեայ գրին իւրում ասէ...», «Եւ դարձեալ ասէ նոյն ինքն Բասիլիոս...», «Զայս ասէ Բասիլիոս» և նմանօրինակ այլ հղումներով:

Կեսարացու «Վեցարեայի» և Շիրակացու մի շարք գործերի համեմատությունը ցույց է տալիս, որ այսօր էլ գիտական որոշակի հետաքրքրություն ներկայացնող Շիրակացու բնագիտական-փիլիսոփայական բացատրությունների զգալի մասի աղբյուրը «Վեցարեայի» հայերեն թարգմանությունն է: Ինչպես պարզվում է ուսումնասիրությունից, Շիրակացու գործերում բազմաթիվ են այն հատվածները, որոնք ժամանակին քաղվելով «Վեցարեայի» հայերեն թարգմանությունից այսօր էլ հիմնականում տևքստաբանական առումով նույնանում են վերջինիս հետ և առկա տարբերություններն էլ իմաստային երանգ չունեցող գրչական այլընթերցումներ են, մասնակի դեպքերում էլ՝ զուտ ձևական-քերականական:

Այսպես, օրինակ.

Կեսարացի

«Եւ ոչ մինչև ցայս վայր ձգեն զանհամ պատմութիւնսն, այլ մինչև ցայս՝ որ ամենեցուն յայտնի է, զի տեարք եմք մտաց և գործոց մերոց, և այսր ժպրհին լինել խափանիչք, յասելն՝ թէ բարիք, և չարիք ոչ ի կամաց մարդկան լինին, և պատճառք նոցա յերկնից կախին. զի անտի, ասեն, լինին մարդիկ բարիք կամ չարք»:

(էջ 121)

Շիրակացի

«Եւ ո՛չ մինչ ցայս վայր միայն ձգեն զանհամ պատմութիւնս, այլ մինչև ցա՛յս ևս որ ամենեցուն յայտնի է, զի տեարք եմք մտաց և գործոց մերոց և այսմ ժպրհին լինել խափանիչք, յասելն թէ՛ բարիք և չարիք ո՛չ ի կամաց մարդոյն լինին, պատճառք նոցա զերկնից կախին, զի անտի, ասեն, լինել մարդիկ չարք և բարիք»⁶:

(էջ 26)

Սակայն նույնը չի կարելի ասել տասնյակ այլ հատվածների մասին, որոնք ընդհանուր առմամբ նույնական լինելով հանդերձ՝ ինչ-ինչ կետերում տարբերվում են միմյանցից և հենց այդ տարբերություններով էլ լրացնում ամբողջացնում են միմյանց թերին, որը ավելի շուտ արդյունք է գրիչների վրիպագիր, անստույգ ընդօրինակման, քան, ասենք, հեղինակային մտահղաց-

⁵ Ա ն ա ն ի ա Շ ի ր ա կ ա ց ի. Տիեզերագիտութիւն և տոմար: Աշխատությամբ Ա. Արքա-համյանի, Ե., 1940, էջ 8. նաև 24, 25 և այլն (այսուհետև՝ Շիրակացի):

⁶ Այսօրինակ ընդհանրություններ տե՛ս «Վեցարեայ», էջ 119—120, հմմտ. Շիրակացի, էջ 19—20: «Վեցարեայի» 121⁹—124⁶ տողերը նույնությամբ առկա են Շիրակացու մոտ (հմմտ. Շիրակացի, էջ 26¹⁸—29¹⁹),

ման: Կեսարացու և Շիրակացու տեքստաբանական առնչակցությունը այս իմաստով խմբավորելի է հիմնականում երկու կետում.

ա) Մի դեպքում Կեսարացու «Վեցարեայով» պետք է սրբագրել Շիրակացու բազմաթիվ հատվածներ, որոնք ինչ-ինչ փոփոխություններ են կրել նույն սկզբնաղբյուր «Վեցարեայից» քաղվելուց հետո, բ) Մեկ այլ դեպքում էլ միևնույն հատվածներում մերթ «Վեցարեայով» պետք է սրբագրել Շիրակացու բնագիրը, մերթ էլ Շիրակացու տեքստով՝ «Վեցարեան»: Երկու դեպքում էլ սկզբնաղբյուրը մնում է Կեսարացու «Վեցարեան»:

Նախ այն ընդհանրությունների մասին, որոնցում Կեսարացու հետևությունյալք պետք է վերանայել Շիրակացու որևէ գործի այս կամ այն հատվածը: Այսպես, օրինակ, Կեսարացու և Շիրակացու մոտ համապատասխանաբար կարդում ենք.

Կեսարացի

«Թէպէտ և ասեն ոմանք զծովէն՝
որ անուանեալ կոշի Հիրկանիայ, և
զնորուն ընկերէն՝ որ անուանեալ կոշի
Կասպիտ թէ գատեալք և մեկնեալք են
սահմանօր...»:

(էջ 74—75)

Շիրակացի

«Թէպէտ և ասեն ոմանք զծովէն,
որ անուանեալ կոշի Հիրկանիայ, և
զնորուն ընկերն,՝ որ անուանեալ կոշի
Ասպիայ թէ գատեալ մեկնեալ են սահ-
մանօր...»:

(էջ 17)

Շիրակացու բերված բառացի ընդօրինակումը երբ համեմատում ենք «Վեցարեայի» հունարեն բնագրի, հայերեն տպագրի, ինչպես նաև գրչագրերի հետ, պարզվում է, որ նրանում երկու անճշտություն կա: Հավանաբար գրչագրի ոչ ձիշտ ընթերցման հետևանք է Շիրակացու վկայած «զնորուն ընկերն» արտահայտությունը, որը պետք է վերընթերցել «զնորուն ընկերէն» ձևով՝ նախ այն պատճառով, որ դա թելադրվում է սկզբնաղբյուր «Վեցարեայով» և ապա քերականորեն էլ նշված հոլովածին է պահանջվում: Հատվածի սկզբնամասի «զծովէն» բառի հետ բացառական հոլով է պահանջում նաև «ընկերն» բառը (ընկերէն), որովհետև ներկա դեպքում ոմանց խոսքը Հիրկանիա ծովի և նրա ընկերոջ մասին է՝ «Թէպէտ և ասեն ոմանք զծովէն... Հիրկանիա և զնորուն ընկերէն», այն տարբերությամբ միայն, որ հոգը դրվել է նախորդ բառի վրա⁷: Մշտողի անվան Մատենադարանի «Վեցարեայ» տասնչորս գրչագրերից միայն № 8352-ում է պահպանվել Շիրակացու հատվածում վրիպում դիտված զնորուն ընկերն ընթերցվածը, որը և հուշում է գրչագրիս ունեցած ընդհանրությունը Շիրակացու հրատարակության հիմք ձևագրի հետ:

Քննվող հատվածում ոչ ձիշտ ընթերցման հետևանք է նաև ընդգծված «Ասպիայ» բառը: «Վեցարեայ» առկա գրչագիր ընդօրինակություններում ունենք բառիս Կազբիայ, Կասպիս, Կասպիայ, Կազբիս և նմանօրինակ տարբերություններ, բայց ոչ երբեք՝ «Ասպիայ»: Վերջին ընթերցվածն ունեն Շիրակացու հրատարակության հիմք գրչագրերը: Բայց, ինչպես ցույց է տալիս «Վեցարեայ» գրչագրերի, տպագրի, վրացերեն երկու թարգմանությունների՝ ռա յասնիա⁸,

⁷ Նշված հոլովածի, ինչպես հայտնի է, գրաբարում պատմական բացառական անվանումն ունի և թարգմանվում է մասին կապի հավելմամբ (զծովէն=ծովի մասին, զընկերէն=ընկերոջ մասին), որը և պահանջվում է ներկա դեպքում:

⁸ Պոքոնովսկի Ռուսագրքերի թանգարանի ձեռագրերի «Յաշարի» և «Գրոգորի» ձեռագրերի տարգմանությունները, Վրացական լեզվաբանական ընկերություն, 1964, էջ 58:

ըստ յանձնոցն⁹ և մանավանդ հունարեն բնագրի համեմատությունը՝ xxi: 27v K220:2v¹⁰, Շիրակացուն սրբագրելով Բարսեղով, նշված բառը պետք է ընթերցել Կասպից, ուր խոսքը Կասպից ծովի մասին է¹¹:

Վկայակոչենք մեկ այլ օրինակ.

Կեսարացի

«Եւ յորժամ շուրջ բակ ունիցի լուսինն ամպոց, և ունիցի մռայլ զարեգակն ամպոց, ջուրք բազումք յօդոց յերկիր առաքին կամ զարամուր փքոց և զդառնաշունչ բքոց ամբոխելոց յայտ առնեն»:

(էջ 115)

Շիրակացի

«Եւ յորժամ շուրջ բակ ունիցի լուսինն յամպոց, և ի նմին աւուր ունի մռայլ զարեգակն յամպոց. ջուրք բազում յօդոց յերկիր առաքին կամ, զարամուր փքոց և զդառնացուցիչ հողմոց ամբոխելոց յայտ առնէ»:

(էջ 42)

Բերված հատվածներում Կեսարացու օրինակով երկու ուղղում կարելի է առաջարկել Շիրակացու տեքստին: Ինչպես տեսնում ենք, Կեսարացու հատվածի «ունիցի» բառի դիմաց Շիրակացու մոտ կարդում ենք՝ «ի նմին աւուր ունի»: Ո՞րն է ճիշտը և նախընտրելին: Եթե անգամ ներկա դեպքում չունենալինք «Վեցարեայի» բնագրի, թարգմանությունների և հայերեն գրչագրերի վերահսկումները, դարձյալ պետք էր ընդունել, որ իմաստային առումով ճիշտը և անաղավաղը Բարսեղ Կեսարացին է, որովհետև «Վեցարեայում» խոսքը լուսնի և Արեւի ամպով ծածկված լինելուն է վերաբերում առհասարակ, առանց որևէ մեկի համար որոշակի օր նկատի ունենալու, ուստի՝ ի նմին աւուր բառերը հետագա շրջանի գրչական հավելում կարող են լինել: Բացի այդ, որևէ օրվա մասին խոսք չկա «Վեցարեայի» ինչպես բնագրում, հայերեն հնագույն գրչագրում (№ 5595, 1279 թ.), այնպես էլ և վրացերեն թարգմանություններում: Ինչ վերաբերում է ունի բայական կիրառությանը, ապա այն պետք է լինի ունիցի, ինչպես Կեսարացու մոտ կողք-կողքի ունենք՝ ունիցի լուսինն, ունիցի զարեգակն:

Մյուս դիտողությունը Շիրակացու «զդառնացուցիչ հողմոց» արտահայտության է վերաբերում, ուր, թվում է, զդառնացուցիչը գրչագրի զդառնաշունչ բառի ոչ ճիշտ ընթերցման հետևանք է: Հիրավի, որքանով է տրամաբանական հողմ, բուր հասկացություններին դառնացնող, դառնացուցիչ որակումը տալ: Մինչդեռ դառնաշունչ ըմբռնումը ավելի հարիր է հողմ հասկացությանը և դրանց համատեղ կիրառության բազմաթիվ օրինակներն են հայտնի մեր մատենագրությանը (ՆՀԲ, I, 597)¹²:

⁹ ԺԱՆՈՒԼԻ ԴԵ Օ. ԵՄԼԵՏԱ ԸԼԵՄԵՆՏ, ԳԻՐԴԳԻ ՄԵԾԵՄԻԸԼԸՍ ԽԱՐԳՄԱՆԻ... ԳԱՄՈՍՆԱ Յ. ԿԱԾԵՄ, ԹԺ. 1947, էջ 45:

¹⁰ J.-P. Migne, Patr. Graeca, Paris, 1857, t. 29, էջ 88 (այսուհետև՝ Migne).

¹¹ Նույնի ուսերեն թարգմանությունում ունենք՝ «Каспійское» (տե՛ս Творения иже во святых отца нашего Василия Великого, изд. 3-е, ч. I., Беседы на Шестоднев, М., 1891, стр. 59).

¹² Շիրակացու հատվածում Կեսարացու նմանությամբ ու դասական հայերենի օրինաչափությամբ ճիշտ կլինե՞ր ունենալ չուրք բազումք և ոչ թե չուրք բազում. յայտ առնեն այլ ոչ թե՛ յայտ առնէ, որովհետև պարզորոշ երկու առաջվող շրթերի (չուրք) մասին է, որոնք սաստիկ բքի և դառնաշունչ հողմի նշան են ընկալվել երբևէ, ուստի և չուրք... յայտ առնեն, ինչ-

Կեսարացու և Շիրակացու տեքստաբանական առնչակցության քննությունը ցույց է տալիս, որ անհամեմատ ավելի շատ են այն ընդհանուր հատվածները, որոնք միաժամանակ սրբագրում, լրացնում են միմյանց թերին: Այսպես, օրինակ, Բարսեղ Կեսարացին ծով և ծովակ հասկացությունների տարբերությունները բացատրելու, ծովի աշխարհագրական սահմանումը տալու նպատակով թվարկում է բազմաթիվ ծովանուններ և ընդգծում, որ ջրի աղիությունն ու ավաղով շրջապատված լինելը լուրջ անհամեմատություն է առկա նաև Շիրակացու մոտ:

Կեսարացի

«Թէպէտ և աղի և դառն ճաշակս ունիցին, և աւագով սահմանեալք գտանիցին ըստ օրինակի կերպարանաց մեծին ծովու, սակայն չէ հնար՝ թէ ի կերպարանս մեծի ծովուն կայցեն, ոչ Ասփաղախէս ծովակ՝ որ մօտ է յաշխարհն Հրէաստանի, և ոչ Սեբրուհիէս ծովակ՝ որ է ընդ Եգիպտոս և ընդ Պաղեստինէ աշխարհ ի միջի, և գայ հասանէ մինչև ի կողմանս արաբացոց»:

(էջ 74)

Շիրակացի

«Թէպէտ և զաղի և զդառն ճաշակս ունիցին, և աւագօք սահմանեալ գտանիցին ըստ օրինակի կերպարանաց մեծի ծովուն, սակայն ոչ է մարթ զծովակս ըն ծովս կոչել: Ո՛չ զԱսփաղախէս ծովակ, որ մօտ յաշխարհն Հրէաստանի է. և ո՛չ զՍեբրուհիէս ծովակ, որ է ընդ Եգիպտոս և ընդ Պաղեստինէ աշխարհի միջի. և գայ հասանէ ի կողմանս արաբացոց»:

(էջ 16)

Վկայակոչված հատվածների նույնությունը ինքնին ակնհայտ է, մի քանի խոսք գրանցում բանասիրական միջամտության անհրաժեշտության մասին: «Վեցարեայի» մեր ձեռքի տակ եղած գրչագրերը, ինչպես նաև Շիրակացու հրատարակության հիմք ձեռագրերի առկա տարբերությունները ցույց են տալիս, որ ընդգծված բառերի գրության տարբերությունները գրչական են և որ դրանք մեծ մասամբ պետք է շտկել մերթ ըստ մեկի, մերթ ըստ մյուսի՝ ձեռքի տակ ունենալով միաժամանակ Կեսարացու գործի հունարեն բնագիրը, հայերեն գրչագրերն ու հարակից թարգմանությունները:

Այսպես, օրինակ, Շիրակացու վկայած «զԱսփաղախիտէս ծովակ» անվանումը ըստ «Վեցարեայի» բնագրի՝ Ἀσφαλιτίς λίμνη¹³, № 5595, 5819 ձեռագրերի և հայերեն տպագրի պետք է ընթերցել Ասփաղախէս ծովակ, իսկ արաբացոյ՝ արաբացոյ:

Նույն հատվածներում հունարեն բնագրի, Մաշտոցի անվան Մատենադարանի «Վեցարեայ» գրչագրերի մի մասի թողությունամբ (№ 5595, 5353, 1657, 3457, 1243, 5819, 10258, 5686) և Շիրակացու նմանությամբ տպագիր «Վեցարեայի» Սեբրուհիէս անվանումը պետք է վերընթերցել Սեբրուհիէս (Σεβρουχίτις¹⁴), աշխարհ ի միջի արտահայտությունը՝ որ սխալ բառանշատման արդյունք է, աշխարհի միջի:

Ջրագոյացությունների բնույթի, ծովերի, ծովախորշերի առաջացման, աշխարհագրական տարբեր լայնություններում գտնվող ծովերի միմյանց հետ

պես ունենք «Վեցարեայում»: Պարզվում է, որ Երկրի, ծովի, երկնային բազմազան մարմինների հետ կապված իր պատկերացում-բացատրություններում նույնպես Շիրակացին օգտվում է Բարսեղ Կեսարացու «Վեցարեայ» ձեռնորդից, որոնցում կան նմանօրինակ վրիպումներ:

¹³ Migne, 6. 29, էջ 88:

¹⁴ Նույն տեղում:

ունեցած ընդհանրության և այլևի մասին Շիրակացու տեղեկությունները հիմնականում քաղված են «Վեցարեայից»։ Օրինակ.

Կեսարացի

«Զի մին անուանեալ կոշի Պոնդոս Եւփինոս և մեւսն Պրովպոնտինոս. և Հելլեսպոնտինոս, և մեւսն էգէտոս, և Ունենինոս, և մեւս ծովն Սարգոնիկէ աշխարհի, և մեւսն Սիկիլիա աշխարհին. դարձ քաղում ևս այլ անուամբ...»։

(էջ 75)

Շիրակացի

«Զի մինն անուանեալ կոշի Պոնտոս և Եւփինոս. և միւսն Պրովպոնտինոս և Հելլեսպոնտոս. և միւսն Եգէտոս և Յունէտոս. և միւս ծովն Սարգոնիկէ աշխարհին. և միւս ծովն Սիկիլիայ աշխարհին. և միւսն Տիրուսի. հանդերձ այլ ևս քաղում անուամբ...»։

(էջ 16)

Նախ՝ Կեսարացու վկայած Պոնդոս Եւփինոս ծովանունը Շիրակացու մոտ դարձել է Պոնտոս և Եւփինոս. այսինքն սկզբնաղբյուր «Վեցարեայի» նշված եզակի անունը իրականում վերածվել է երկու հատուկ անվան։ «Վեցարեայ» տասնչորս գրչագրերից տասը նշված անվան գրությունը նույնանում են տպագրի հետ, իսկ չորսը (№№ 5353, 1657, 8352, 620) պահպանել են Շիրակացու բնագրում առկա տարբերությունը։ Որ ներկա դեպքում ճիշտը, անաղավաղը «Վեցարեայի» հայերեն թարգմանությունն է երևում է հետևյալից. խնդրո առարկա հասկացության դիմաց հունարեն բնագրում կարդում ենք՝ «Πόντος Εὐφείνης», ուր խոսքը Հյուսիսային ծովի մասին է՝ առանց անվան իմաստային տարանջատման ու երկատման։ Վրացերեն թարգմանություններից մեկում՝ կատարված հունարենից, XI դարում, ճիշտ հունարենի նմանությամբ պահպանվել է «გვესბო-პონტო»¹⁵ ձևը, մյուսում՝ կատարված արաբերենից, մինչև X դարը, ունենք պարզապես «გვესბო-პონტო»¹⁶, ինչ է կատարվել երկրորդ դեպքում. վրացի թարգմանիչը չի պահել բնագրի ձևական կոդը, այլ միանգամայն ճիշտ ընկալելով «Պոնտոս Եւփինոսի» նշանակությունը; այն թարգմանել է մեկ բառով՝ ծով՝ նշանակությամբ։

Այսպիսով «Վեցարեայի» բնագրի, հայերեն գրչագրերի մեծ մասի, տպագրի, ինչպես նաև հարակից թարգմանությունների հավաստմամբ տվյալ պարագայում գործ ունենք մեկ անվան հետ, որը, թերևս սխալ ընթերցման հետևանքով, Շիրակացու մոտ վերածվել է «Պոնտոս» (սծով) ու «Եւփինոս» (սաշտուրենկալ) երկու տարբեր ծովանունների և այն պետք է ուղղել ըստ «Վեցարեայի»։

Շիրակացու քննվող հատվածն էլ իր հերթին էական բնագրային ճշտում կարող է մտցնել Կեսարացու «Վեցարեայի» հայերեն թարգմանությունում, որի անաղարտ օրինակից քաղվել է այն VII դարում։ Նախ՝ ավելի ճիշտ են տառադարձված Հելլեսպոնտոս, Եգէտոս, Յունէտոս հատուկ անունները։ Բայց առավել կարևորը հետևյալն է. Կեսարացու վերոբերյալ հատվածի վերջնամասը՝ դարձ քաղում ևս այլ անուամբ, թե՛ ընդհանուր հատվածի մեջ և թե՛ առանձին վերջ-

¹⁵ ԾԱՆՈԹՈՒ ԹՈՒԹՈՒ, էջ 43, Ռուսերենում ունենք՝ «Евксинский Понт» (տե՛ս. «Шестоднев», էջ 39)։

¹⁶ გვესბო-პონტო, էջ 38։

րած անհասկանալի է, իսկ նույն դարձ ըստը տվյալ պարագայում՝ անիմաստ։ Մինչդեռ նույն հատվածի Շիրակացու զուգահեռը ցույց է տալիս, որ Կեսարացու առկա հրատարակության հիմք գրչագրից երբևէ, ինչ-ինչ ճանապարհով, օտարվել է նախ մեկ տեղանուն իր համապատասխան թվարկմամբ՝ և միան Տիրոսի¹⁷ և ապա հանդերձը դարձել է դարձ։ «Վեցարեայի» մեր ձեռքի տակ հղած բոլոր գրչագրերը, ի տարբերություն տպագրի, և վրացերեն խմբագրություններն ու մանավանդ հունարեն բնագիրը նույնությամբ պահպանել են Շիրակացու լրացումը։ Ահա վերևում համադրաբար վկայակոչված հատվածների հունարենը. «Καὶ ὄνοματ' αὐὸν πελαγῶν ἰδιόχοντα· Πόντος Εὐξείνους, καὶ Πρωποντίς· Ἐλλήσποντος, Αἰγαίος καὶ Ἴωνος, Σαρδονικὸν πελαγὸς καὶ Σικελικόν, καὶ Τυρρηνικόν ἕτερον. Καὶ παρὰ γὰρ ὄνοματ' αὐὸν πελαγῶν...»¹⁸,

«Յաղագս երկնային զարդուց՝ գործում Շիրակացին ամենից շատ է օգտվել Կեսարացու «Վեցարեայ» ճառերից։ Դա հիմնականում նորից երկու բնույթի է. մի դեպքում նա վերապատմում, վերաշարադրում է ինչ-ինչ հարցերի Կեսարացու տված պատասխան-լուծումները, օգտագործելով վերջինիս կիրառած առանձին բառեր և արտահայտություններ, երկրորդ դեպքում ոչ թե վերապատմում, այլ նույնությամբ ընդօրինակում է Կեսարացուն։ Օրինակ.

Կեսարացի

«Նա և մեծ վաստակն արուեստագիտաց ընդ ունայնս ցրէր և վարն, և աշխատութիւն մշակացն անօգուտ էր. զի իբրև ոչ կարկանդակն զձեռս ի գործ, գայցէ դարման կենաց իւրեանց առանց մուրակ շրջելոյ»:

(էջ 123)

Շիրակացի

Նաև մեծավաստակն արուեստագիտաց ընդունայնասոյր է և վայր՝ և աշխատութիւն մշակացն անօգուտ էր, զի իբրու ոչ կարկանդակն զձեռս իւրեանց ի գործ գայցէ դարման կենաց իւրեանց առանց մուրկան շրջելոյ...»:

(էջ 28—29)

Այստեղ նկատելի է երկու բնույթի տարբերություն։ Մի դեպքում խոսքը միևնույն բառերի տարբերակվող գրություն մասին է. այսպես՝ նա և-նաև, մեծ-վասաակն-մեծավասաակն. արուեստագիտաց-արուեստագիտաց, իբրև-իբրու և կարկանդակն-կարկանդակն, որոնք, առանց միմյանց հետ համադրվելու, գրչագրերից նույնությամբ ընդօրինակվել են Կեսարացու և Շիրակացու հրատարակություններում։ Երկրորդ դեպքում գործ ունենք բառային աղավաղումների հետ։ Ինչպես պարզվում է բերված հատվածների համադրումից, Շիրակացու վկայության առաջին ընդգծված մասը անհասկանալի է և, թերևս, աղավաղված։ Աղբյուրագետ պրոֆ. Ա. Աբրահամյանը այդ առթիվ նկատել է. «Ընդունայնասոյր է և վայր տեղին հարմար չի։ Ծնթադրում ենք թե պետք է ուղղել. ընդունայն, իզուր և ընդ վայր»¹⁹:

Որ ընդունայնասոյր ընթերցումը գրչական աղավաղում է և ոչ հասկանալի, դա կասկածից վեր է։ Ուստի և ճիշտ է վերականգնման առաջին մասը՝ ընդունայն բառիմաստի անջատումը ասոյր խաթարված ձևից, բայց միաժամանակ հասկանալի չէ իզուր բառը նույն անտեղի նշանակությամբ և, վերջապես,

¹⁷ Ճիշտ ձևը՝ Տիր[են]ոսի՝ առաջարկված ակտը. Ս. Տ. Երեմյանի կողմից։

¹⁸ Migne, 4. 29, էջ 88.

¹⁹ Շիրակացի, էջ 28—29, տողատակ՝ 31—1:

անհարկի է վայր բառի ներկա կիրառությունը: Նշված վերականգնումը վերջնական չէ միաժամանակ հետևյալ պատճառով. Բարսեղ Կեսարացու խոսքը, որից ընդօրինակել է Շիրակացին, ներկա դեպքում հողի աշխատավորի անօգուտ դատումի, վարելու, ցանելու մասին է, որը «արուեստագիտաց» կողմից «ընդ ունայնս ցրէր»: Ուստի, առաջինով սրբագրելով երկրորդին՝ «ընդունայնասոյր է և վայրը» պետք է փոխարինել «ընդ ունայնս ցրէր և վարն» բառակապակցությամբ, ինչպես այն կա նաև «Վեցարեայ» ձեռագրերի մեծ մասում: Շիրակացու ձեռքի տակ եղած գրչագրի վիճակի առումով ուշագրավ է այն իրողությունը, որ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող «Վեցարեայ» № 5595 գրչագիրը նույնությամբ պահպանել է Շիրակացու բնագրում սրբագրվող վրիպումը: Նշանակում է տակավին VII դարում Կեսարացու որոշ գրչագրերում արդեն աղավաղումներ են եղել, որտեղից և այն անցել է Շիրակացուն:

Քննենք մեկ այլ հատված.

Կեսարացի

Շիրակացի

«Եւ եթէ ընդ արդարութեան՝ զոր փորձէին մարդիկ, ոչ լինէր նոցա պատիւ և պարգև, և ոչ պատիժ և դատապարտութիւն չարագործացն, ապա ի զուր և ընդունայն է յոյս քրիստոնէից. և առանց սանձաց նահանջելոյ ընթանային ամենեքին յամբարշտութիւն. զի ոչ գոյր վրէժխնդիր՝ որ խնդրէր զվրէժ շարեաց գործոց. քանզի ոչ մերովք կամօք լինեին, որպէս ասեն մոլորեալքն»:

(էջ 123)

«Եւ թէ ընդ արդարութեան զոր գործէին մարդիկ ո՛չ լինէր նոցա պատիւ և պարգև, և ո՛չ պատիժ և դատապարտութիւն չարագործացն. ապա իզուր և ընդունայն են յոյս քրիստոնէից, և առանց նահանջելոյ անձանց ընթանային ամենեքեան յամբարշտութիւն, զի ո՛չ գոյր վրէժխնդիր, որ խնդրէր վրեժ շարեացն գործոց: Քանզի ո՛չ մերով կամաւ լինին, որպէս ասեն մոլորեալքն»:

(էջ 29)

Վկայակոչված նույնական հատվածներում փորձէին-գործէին բառերի իմաստից դատելով՝ պետք է ընդունել, որ նախընտրելին գործէին բառն է: № 5595 գրչագրում ևս, Շիրակացու նմանությամբ, ունենք գործէին և ոչ թե փորձէին:

Ինչ վերաբերում է հատվածների երկրորդ էական՝ սանձաց-անձանց տարբերությանը, ապա պետք է «Վեցարեայով» սրբագրել Շիրակացուն, որովհետև Կեսարացու խոսքը հղիացած, ոչնչից չերկնչող, առ ամբարշտություն ընթացող անսանձների մասին է:

Այսպիսով, հոգովածում քննված հատվածների նմանությամբ կարելի է հիշյալ երկու մատենագիրների ընդհանրության բազմաթիվ այլ օրինակներ ևս վկայակոչել, բայց բերվածներն էլ բավարար հիմք են ասելու, որ Շիրակացու «Յաղագս երկնային զարդոց», «Յաղագս Լուսնի», «Յաղագս ծովու» և այլ գործերի վրա բացահայտ են «Վեցարեայի» հետքերը: Ուստի և Կեսարացու մատենագրական ժառանգության, հատկապես «Վեցարեայի» հետքերի ու-

սումնասիրումը հայ իրականության մեջ ունի երկակի նշանակություն. ա) դրանով իսկ հնարավոր է դառնում սրբագրությունների կատարել հայ հեղինակների գործերում, վերականգնել նախնական վիճակը և բ) հայ մատենագիրների օգնությամբ ստուգել ու սրբագրել Կեսարացու գործերի, մասնավորապես, «Վեցարեայի» այն աղավաղումները, որ տեղի են ունեցել միջնադարում, գրչական ընդօրինակումների ժամանակ:

ТЕКСТОЛОГИЧЕСКОЕ СООТНОШЕНИЕ «ШЕСТОДНЕВА» ВАСИЛИЯ КЕСАРИЙСКОГО И НЕКОТОРЫХ СОЧИНЕНИЙ АНАНИИ ШИРАКСКОГО

К. М. МУРАДЯН

Р е з ю м е

Широкая известность сочинения Василия Кесарийского в древнеармянской литературе отразилась двояко: либо «Шестоднев» стал литературным первоисточником для армянских авторов, либо составлялись комментарии-толкования к этому памятнику. В арменистике давно отмечалось, что Анания Ширакский часто обращается к Василию Кесарийскому, заимствует у него не только отдельные определения, но и целые отрывки. Изучение показало, что, во-первых, таких мест у Ширакского куда больше, чем предполагалось, и, во-вторых, что эти отрывки заслуживают внимания и с филологическо-текстологической точки зрения.